

ջլատուին, կը կտըրտուին, կ'անջատուին իրարմէ այն բարոյական թեւերը, որոնք իրարու հետ սերտ հիւսուած կը պահեն լինկերութեան անդամներուն մտքերն ու սրտերը. և ուր չի մնար միութիւն մտքերու և սրտերու՝ ինչպէս կրնայ հոն այլ եւս միակ լինկերութիւն ըսուած բանն:

Հարկ է ուրեմն որ ճշմարտութեան օդոյն պայծառութեանն ենթարկենք, արդարութեան արեւուն ճառագայթից տակ դնենք, իրաւունքի թեւերով թօթուենք, սիրոյ վրձինով թափ տանք լինկերութեան մը միջէն և ջնջենք շուտով այդ բարոյական ցեցերը, եթէ չենք ուզեր այդ լինկերութեան անհրաժեշտ քայքայումը:

Էլ սակայն ամենամեծ դժուարութիւնը նոյն իսկ այն բանին մէջ է՝ որ հեշտօրէն կարելի չէ նշմարել այդ ծածկասէր, սահուն, սողոսկուն, ճապկոտուն բարոյական ցեցերը, որոնք իրենց նիւթական եղբայրակիցներուն նման՝ խաւարի մէջ ապրիլ կը սիրեն, մութի մէջ թազուն կեանք կը վարեն, միանձնացեալ և լուռումունջ կեանքի մը կեղծիքին ներքեւ՝ իրենց աւերիչ գործը կը շարունակեն: Շատ ճարտար են այդ տեսակ ցեցերը զիրենք փրնտուելու և ջնջելու պարտականութիւն և պաշտօն և ըսենք նաեւ բարի-կամք ունեցողներուն ումանց տգիտութենէն օգտուելու, ուրիշներու անձնասիրութենէն, այլոց չարասիրութենէն, բազմաց շահախնդրութենէն և ոչ սակաւուց անկարողութենէն, տատամութենէն, անհոգութենէն, անխոհեմութե-

նէն, և այլն: — Էլ որովհետեւ նոյն իսկ այս պակասութիւններս ալ՝ եթէ ոչ լինկերութեան՝ այլ անձնական կամ անհատական բարոյական ցեցեր են, ուստի յայտնի բան է՝ որ անձնական ցեցը չի հալածեր և ոչ ընչացանք լինկերութեան ցեցերը, այլ մանաւանդ ազատ ժամանակ և առատ նիւթ կը մատակարարէ՝ անոնց հետզհետէ զարգանալուն, քանի որ ինքն ալ անոնց գործոյն մէջ կը փնտտէ և կը գտնէ իր սնունդն և յագուրդը:

Հարկ է ուրեմն որ զինուած՝ չարին դէմ ատելութեամբ և սուտին դէմ ճշմարտասիրութեամբ՝ մանրագին դիտակով հետազօտենք և երեսան հասնենք այդ տեսակ որդերուն նկարագիրը, հրապարակենք՝ լուսանկարելով անոնց ստոյգ դիմագիծը՝ իրենց գործերէն նշողած ճառագայթացումով, որպէս զի մեր զգեստներուն համար գործադրուածին հաւասարախնամ հոգածութեամբ զգուշանանք՝ որ մեր լինկերութիւններուն կազմակերպութիւնն և զարգացումը չենթարկուին այդ մահաբեր ուտիճներուն աւերիչ գործունէութեան:

\*  
\*\*

Տեղւոյ անձկութիւնն և օգտալից յոգուածոց առատութիւնը կը ստիպէ զիս յաջողդ ամսաթուին ձգելու առաջադրած նպատակիս կատարումը կամ զբաժ տղերուս շարունակութիւնը:

Հ. Ա. ՏԻՐՈՅԱՆ

Ա Ռ Ա Ծ Ք Ն Ա Թ Ն Ե Ա Յ

Ամէն զէն (գեակ)՝ մարդոյն խրատ մի է:  
Ո՛վ ամառն դատարկ ի շուրջ գայ, ձմեռն աստա՞ն ի վերայ ատամանն տայ:  
Գիտենան թէ ի Սողոմոնի մատանին զի՛նչ էր զբաժ: — Գրած էր բանն ոսկի գրով՝ թէ « Այս էլ անցանէ »:  
Փնա՛ հաց տուր՝ թէ անուն կ'ուզես, որ հացն անցանէ՛ անունդ մնայ:

